

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-752-02.10.2020-ՖՎ, ԱՍ, ԱՀ, ԳԿ, ԵԻ, ՄԻ, ՊԱ, ՊԻ, ՏԵ, ՏՀ, ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ) քննարկվել է Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության ֆինանսատնտեսագիտական փորձաքննության, սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության և պետաիրավական փորձաքննության բաժիններում:

Նախագիծը հիմնականում համապատասխանում է Սահմանադրությամբ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով, ինչպես նաև բյուջետային հարաբերությունները կարգավորող մյուս օրենքներով սահմանված պահանջներին:

Նախագծի ուսումնասիրության և քննարկման արդյունքում ձևավորվել են մի շարք նկատառումներ, որոնցից հիմնականները հետևյալն են.

1. Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետի՝ բացատրագիրը պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը հիմնավորող փաստաթղթերի ամբողջություն է, որը ներառում է պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը՝ ըստ օրենքով սահմանված հարկային և այլ եկամտատեսակների: Նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պետական բյուջեի եկամուտների աղբյուրներն են հարկային եկամուտները, պետական տուրքերը, պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները, իսկ 2-րդ մասով ներկայացված են հարկային եկամուտները՝ ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտային հարկ և այլն: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ 2021 թվականի պետական բյուջեի ուղերձում բացակայում են առանձին հարկատեսակների գծով կանխատեսվող ցուցանիշներն ու դրանց հիմնավորումները, ինչպես նաև առաջիկա տարում պլանավորվող հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը պայմանավորող գործոնների մեկնաբանությունները: Մեր կարծիքով, նշված իրավիճակը ոչ միայն չի բխում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի վերը նշված հոդվածների պահանջներից, այլև հակասում է բյուջետային ուղերձի տրամաբանությանն ու նպատակային նշանակությանը:

Որպես կանոն, հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը վերջին տարիներին հիմնականում պայմանավորված է եղել երեք հիմնական գործոններով՝ ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման

միտումներով, հարկային օրենսդրության փոփոխություններով և վարչարարական միջոցառումներով: Այս առումով, 2021 թվականի բյուջետային ուղերձում առանձին հարկատեսակների գծով կանխատեսումների, ինչպես նաև հարկային եկամուտների ակնկալվող աճի բացվածքի և այն պայմանավորող գործոնների վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս լիարժեք և ամբողջական կերպով գնահատել և պատկերացում կազմել ինչպես հարկաբյուջետային ցուցանիշների փոփոխության միտումների, այնպես էլ պլանավորվող ցուցանիշների իրատեսականության և արժանահավատության վերաբերյալ: Հետևաբար, կարծում ենք, որ բյուջետային փաստաթղթի ամբողջականության ապահովումը ենթադրում է վերը նշված կանխատեսումների համակողմանի և մանրակրկիտ ներկայացում, ինչն էլ, ցավոք, բացակայում է:

2. 2021 թվականին հանրապետության տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով կանխատեսումները բավականաչափ համեստ են: Միաժամանակ, հաշվի առնելով կորոնավիրուսի համաճարակի հետևանքով 2020 թվականին հանրապետությունում սպասվող 6 տոկոս տնտեսական անկումը, դրանք հիմնականում կարելի է հուսադրող համարել: Մասնավորապես, ըստ Կառավարության կանխատեսումների, առաջիկա տարում ՀՆԱ-ի իրական աճը կկազմի 4.8 տոկոս (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1.

Տնտեսական աճի դինամիկան 2017-2021 թվականներին

	2017	2018	2019	2020	2021
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր
Տնտեսական աճ (%)	7.5	5.2	7.6	-6.0	4.8

Ինչպես նկատում ենք, 2021 թվականի համար կանխատեսվող տնտեսական աճի ցուցանիշը (որն, ի դեպ, դրված է նաև պետական բյուջեի ցուցանիշների հաշվարկման հիմքում), զիջում է 2017, 2018 և 2019 թվականներին հանրապետությունում գրանցված տնտեսական աճի ցուցանիշներին, համապատասխանաբար՝ 2.7, 0.4 և 2.8 տոկոսային կետով: Միաժամանակ, անհրաժեշտ հաշվի առնել, որ առաջիկա տարվա համար տնտեսական աճի, ինչպես նաև մակրոտնտեսական մյուս ցուցանիշների կանխատեսումն իրականացվել է անորոշության բավականաչափ բարձր մակարդակի պայմաններում, ինչը ստեղծում է լրացուցիչ ռիսկեր դրանց ապահովման համար:

Տնտեսական աճի կանխատեսվող մակարդակի ապահովումն, անշուշտ, որոշակի հիմք կհանդիսանա հետճգնաժամային փուլում տնտեսության վերականգնման ու զարգացման

համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման և հարկաբյուջետային ցուցանիշների բարելավման համար: Միաժամանակ, տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի ապահովումը, բացի համաճարակի հետագա տարածմամբ պայմանավորված իրավիճակից, կախված կլինի նաև երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունից, ինչպես նաև արտաքին տնտեսական գործոններից և համաշխարհային տնտեսության զարգացումներից: Ընդ որում, համաճայն Կառավարության գնահատումների, կորոնավիրուսի տարածման և տևողության անորոշությունների հետևանքով տնտեսական աճի ռիսկերը կլինեն առավելապես դեպի ներքև, ինչը, բնականաբար, իր համապատասխան անդրադարձը կունենա բյուջետային եկամուտների վրա: Կարծում ենք, նման իրավիճակում պետք է նախատեսվեն եկամտի լրացուցիչ աղբյուրներ՝ տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի չապահովման դեպքում բյուջետային մուտքերի ճեղքվածքը ծածկելու համար:

3. Համաճայն 2021 թվականի բյուջետային ուղերձի՝ առաջիկա տարում արդյունաբերությունը կաճի 5.2 տոկոսով, գյուղատնտեսությունը՝ 3.9 տոկոսով, ծառայությունների ոլորտը՝ 4.1 տոկոսով, իսկ շինարարության ոլորտը՝ 4.9 տոկոսով (տե՛ս աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2.

ՀՆԱ իրական աճն ըստ տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների 2017-2021 թվականներին (տոկոսային արտահայտությամբ)

	2017	2018	2019	2020	2021
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր
ՀՆԱ	7.5	5.2	7.6	-6.0	4.8
Արդյունաբերություն	11.8	4.9	8.3	-1.0	5.2
Գյուղատնտեսություն	-5.1	-6.9	-2.6	0.7	3.9
Շինարարություն	2.8	0.6	3.7	-17.6	4.9
Ծառայություններ	10.6	9.1	10.7	-6.9	4.1

Ինչպես նկատում ենք աղյուսակ 2-ից, 2021 թվականին ամենաբարձր աճը կանխատեսվում է արդյունաբերության և շինարարության ոլորտներում, որը կկազմի համապատասխանաբար՝ 5.2 և 4.9 տոկոս: Կարծում ենք, նման միտումը բավականաչափ դրական է տնտեսական աճի ճյուղային կառուցվածքի բարելավման համար: Այս առումով, Կառավարության հիմնական առաջնահերթություններից մեկը պետք է դառնա տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությանն ուղղված գործնական քայլերի իրականացումը,

ինչը, մեր կարծիքով, կնպաստի տնտեսական աճի կառուցվածքի բարելավմանը: Ըստ էության, տնտեսական զարգացման ներկա փուլում կարևոր նշանակություն ունի ոչ միայն տնտեսական աճի ապահովումը, այլև դրա որակի այնպիսի փոփոխությունը, որը հնարավորություն կտա առավել առարկայական դարձնել տնտեսական աճի ազդեցությունը: Մեր կարծիքով, իրականացվելիք տնտեսական քաղաքականության նպատակային թիրախներ պետք է դառնան հարկունակ ճյուղերի զարգացումը՝ միաժամանակ համեստ դերակատարում վերապահելով հարկազատված ոլորտներին: Այլ կերպ, կարևորելով երկրում տնտեսական աճի ապահովումը, միևնույն ժամանակ պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի բարելավման ուղղությամբ, ինչը կնպաստի հարկային բեռի հնարավորինս օպտիմալ բաշխմանը և, դրանով իսկ, բյուջետային եկամուտների ավելացմանը:

4. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1 տրիլիոն 569.1 մլրդ. դրամի չափով, 2020 թվականի հաստատված 1 տրիլիոն 695.0 մլրդ դրամի և 2019 թվականի փաստացի 1 տրիլիոն 565.5 մլրդ դրամի դիմաց (տե՛ս աղյուսակ 3-ը): Այլ կերպ, առաջիկա տարվա բյուջետային եկամուտների պլանավորված ծավալն ընթացիկ տարվա ցուցանիշին զիջում է մոտ 7 տոկոսով կամ 125 մլրդ դրամով: Ակնկալվում է, որ 2021 թվականին հարկային բեռի ծանրությունը բնութագրող հիմնական՝ հարկային եկամուտներ և տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 22.3 տոկոս՝ ընթացիկ տարվա ծրագրային և 2019 թվականի փաստացի ցուցանիշների 22.6 տոկոսի և 22.3 տոկոսի դիմաց: Ընդ որում, նախատեսվում է նաև, որ 2021 թվականին բյուջետային մուտքերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը՝ 1 տրիլիոն 500.9 մլրդ. դրամ՝ 2020 թվականի և 2019 թվականի փաստացի մուտքերի համապատասխանաբար՝ 1 տրիլիոն 602.3 մլրդ. դրամի և 1 տրիլիոն 464.3 մլրդ. դրամի դիմաց:

Աղյուսակ 3.

Բյուջետային եկամուտների աճի դինամիկան 2019-2021 թվականներին

Եկամտատեսակ (մլրդ դրամ)	2019թ. փաստացի (մլրդ դրամ)	2020թ.բյուջե (մլրդ դրամ)	2021թ.կանխատեսում (մլրդ դրամ)
Ընդամենը եկամուտներ, որից՝	1,565.5	1,695.0	1,569.1
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,464.3	1,602.3	1,500.9
Պետական դրամաշնորհներ	12.4	35.3	23.2
Այլ եկամուտներ	88.8	57.4	45.0

Պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի համապատասխանաբար՝ 23.2 մլրդ. դրամը և 45.0 մլրդ. դրամը: Պետք է նկատի ունենալ, որ 2021 թվականին պլանավորվող բյուջետային եկամուտների ծավալը զիջում է 2020 թվականի հաստատված ցուցանիշին: Ամենայն հավանականությամբ, հաշվի առնելով սպասվող տնտեսական անկումը, 2020 թվականի բյուջետային եկամուտների փաստացի ցուցանիշը կլինի ավելի փոքր, ինչի պարագայում 2021 թվականի համար պլանավորվող բյուջետային եկամուտների ծավալը կարելի է հուսադրող համարել:

5. Համաձայն Նախագծի, հարկային եկամուտները և պետական տուրքերը 2021 թվականի համար ծրագրվել են 1 տրիլիոն 500.91 մլրդ. դրամի չափով՝ ընթացիկ տարվա 1 տրիլիոն 602.3 մլրդ. դրամի և 2019 թվականի փաստացի 1 տրիլիոն 464.3 մլրդ դրամի դիմաց (տես աղյուսակ 4-ը): Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ առաջիկա տարում 4.8 տոկոս տնտեսական աճի պարագայում կանխատեսվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության 0.3 տոկոսային կետով անկում: Իսկ 2020 թվականին, չնայած սպասվող 6 տոկոս տնտեսական անկմանը, հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2019 թվականի համեմատ կաճի 0,3 տոկոսային կետով: Չուտ տեսականորեն, դա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ հարկային եկամուտների կրճատումը, տնտեսական անկման համեմատությամբ, ավելի զուսպ է լինելու: Սակայն առավել խորքային գնահատման համար, մեր կարծիքով, բացատրագրում պետք է ներկայացվեին տնտեսության կառուցվածքային ճյուղերում ակնկալվող փոփոխությունների և դրանցով պայմանավորված հարկային մուտքերի ավելացման կամ կրճատման համակողմանի վերլուծությունները, ինչն էլ, ցավոք, բացակայում է:

Աղյուսակ 4.

ՀՀ 2019-2021 թվականների պետական բյուջեների եկամուտների կառուցվածքը

Եկամտատեսակ	2019թ. փաստացի		2020թ. բյուջե		2021թ. կանխատեսում	
	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատմամբ (%)	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատմամբ (%)	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատմամբ (%)
Ընդամենը եկամուտներ, որից	1,565.5	23.8	1,695.0	23.9	1,569.1	23.3

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,464.3	22.3	1,602.6	22.6	1,500.9	22.3
Պետական դրամաշնորհներ	12.4	0.2	35.3	0.5	23.2	0.3
Այլ եկամուտներ	88.8	1.4	57.4	0.8	45.0	0.7

Մասնավորապես, 2021 թվականին տնտեսության բոլոր ճյուղերում ակնկալվող աճի համատեքստում հարկեր/ՀՆԱ ցուցանիշի նվազումը լրացուցիչ բացատրությունների կարիք է զգում: Ի դեպ, նման գնահատման նպատակ էր հետապնդում նաև սույն եզրակացության 1-ին կետում ներկայացված նկատառումը՝ հարկային եկամուտների մանրամասնեցված ներկայացման վերաբերյալ:

Միաժամանակ, հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ցածր մակարդակն էականորեն սահմանափակում է պետության ծախսային պարտավորությունների ընդլայնման հնարավորությունները և, այս տեսանկյունից, առաջիկա տարիներին դրա աստիճանական բարձրացումը, կարծում ենք, պետք է դառնա ընդհանուր տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Ընդ որում, այն պետք է իրականացվի ինչպես համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի բարելավման, այնպես էլ տնտեսության հարկային ներուժի լիարժեք օգտագործման և հատկապես ստվերային հատվածի կրճատման ուղղություններով:

Այս առումով, կարծում ենք, որ հանրապետությունում իրականացվելիք տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը, այլև տնտեսական աճի կառուցվածքի և որակի բարելավմանը՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով հարկունակ ճյուղերի զարգացման վրա:

6. Հարկային ներուժի գնահատման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հարկային ծախսերի մակարդակը (հարկային ծախսերը գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտներն են կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսերն են, քանի որ հարկային ծախսերը հանգեցնում են համապատասխան գումարի չափով բյուջետային ծախսերի կրճատման): 2021 թվականին միայն երեք հարկատեսակների գծով հարկային ծախսերի մակարդակը հետևյալն է (տես աղյուսակ 5-ը):

Հարկային ծախսերի գնահատականը ՀՀ-ում 2021 թվականին (մլրդ. դրամ)

	Հարկային ծախսերի տեսակը	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
1	ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝	362,931	24.18%	5.40%
1.1.	<i>գյուղատնտեսություն</i>	16,544	1.10%	0.25%
1.2.	<i>առողջապահություն</i>	53,279	3.55%	0.79%
1.3.	<i>կրթություն</i>	27,807	1.85%	0.41%
1.4.	<i>ֆինանսներ և սպառողագրություն</i>	73,878	4.92%	1.10%
1.5.	<i>ԱԱՀ-ի շեմ</i>	38,957	2.60%	0.58%
1.6	<i>խաղատների գործունեություն</i>	16,805	1.05%	0.24%
1.7	<i>ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում</i>	53,217	3.55%	0.79%
1.8	<i>ոսկու և թանկարժեք քարերի իրացում</i>	3,167	0.21%	0.05%
1.9	<i>մարդասիրական օգնություն</i>	3,924	0.26%	0.06%
1.10	<i>պարարտանյութերի իրացում</i>	3,615	0.24%	0.05%
1.11	<i>ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարում</i>	19,847	1.32%	0.30%
1.12	<i>ջրօգտագործողների ընկերությունների կողմից ռոռզման ջրի օտարում</i>	1,439	0.10%	0.02%
1.13	<i>սուբսիդիանների, սուբվենցիանների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում</i>	913	0.06%	0.01%
1.14	<i>ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար</i>	133	0.01%	0.00%

	<i>աշխատանքների կատարում, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում</i>			
1.15	<i>այլ օրենքներով տրված արտոնություններ</i>	1.860	0.12%	0.03%
1.16	<i>այլ արտոնություններ</i>	62,425	4.16%	0.93%
1.17	<i>միկրոբիզնեսին տրված հարկային արտոնություններ</i>	1,924	0.13%	0.03%
2	Շահութահարկի գծով, այդ թվում՝	71,739	4.78%	1.07%
2.1.	<i>գյուղատնտեսություն</i>	40,925	2.73%	0.61%
2.2.	<i>հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության</i>	6,188	0.41%	0.09%
2.3.	<i>շահութահարկի նվազեցման արտոնություններ</i>	98	0.01%	0.00%
2.4.	<i>ԱԱՀ-ի շեմ</i>	23,374	1.56%	0.35%
2.5	<i>միկրոբիզնես</i>	1,154	0.08%	0.02%
3	Եկամտային հարկի գծով՝ այդ թվում՝	16,406	1.09%	0.24%
3.1.	<i>գյուղատնտեսության ոլորտի աշխատողների աշխատավարձ</i>	11,608	0.77%	0.17%
3.2	<i>միկրոբիզնես</i>	4,798	0.32%	0.07%
Ընդամենը		451,075	30.05%	6.71%

Ինչպես նկատում ենք աղյուսակ 5-ի տվյալներից, 2021 թվականին ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով հարկային ծախսերի ծավալը կկազմի 451.1 մլրդ դրամ կամ հարկային եկամուտների 30,05%-ը: Անշուշտ, հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը բավականաչափ մեծ ծավալ է կազմում՝ հատկապես ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում: Ընդ որում, հատկապես մտահոգիչ է այն իրողությունը, որ դրանց ծավալները վերջին տարիներին արձանագրում են աճի կայուն միտումներ: Ըստ էության, դա կարող է արդարացված լինել միայն հարկային արտոնությունների տրամադրման արդյունքում ստացվելիք համարժեք օգուտների ապահովման պարագայում:

Այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է վերախմաստավորել հարկային արտոնությունների դերն ու նշանակությունը հարկային կարգավորման գործում և ստեղծել

այն նախադրյալները, որոնց առկայության պարագայում միայն դրանք կապահովեն անհրաժեշտ սոցիալ-տնտեսական էֆեկտ: Առնվազն վերջին տաս տարիների բյուջետային եկամուտների դինամիկայից ակնհայտ է, որ հանրապետությունում գործող հարկային արտոնությունների հետևանքով բյուջետային կորուստները համարժեք չեն ոչ միայն ստացված սոցիալ-տնտեսական օգուտներին, այլև տնտեսության ճյուղային կառուցվածքի աննշան փոփոխություններին, ինչն էլ ենթադրում է դրանց տրամադրման գործընթացի հանդեպ որակապես նոր մոտեցումների որդեգրման անհրաժեշտություն: Մեր կարծիքով, ելնելով նշված իրողություններից, անհրաժեշտ է ապահովել հարկային արտոնությունների առավելագույն հասցեականություն և բացառել տարբեր եղանակներով դրանցից անհիմն օգտվելու հնարավորությունը, իրականացնել հարկային ծախսերի չափի և ստացված սոցիալ-տնտեսական էֆեկտի համադրում՝ դրանց արդյունավետության գնահատման և չհիմնավորված արտոնություններից հրաժարման նպատակով: Բացի այդ, հաշվի առնելով նաև հանրապետությունում ներկայումս ձևավորված հարկային ծախսերի ծավալը, կարծում ենք, ժամանակն է իրականացնել գործող հարկային արտոնությունների համակողմանի վերլուծություն՝ դրանց տեսակներից յուրաքանչյուրի հիմնավորվածության, արդարացիության և սոցիալական ու տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից:

7. Առաջիկա բյուջետային տարում պետական բյուջեի ծախսային մասը կկազմի 1 տրիլիոն 843.1 մլրդ. դրամ, ինչն ընթացիկ տարվա հաստատված ցուցանիշից պակաս է 12.7 մլրդ. դրամով: Ինչ վերաբերում է բյուջետային ծախսերի կառուցվածքին, ապա ծախսերի ամբողջ ծավալի 88.3%-ը կամ 1 տրիլիոն 627.7 մլրդ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, իսկ 11.7%-ը կամ 215.4 մլրդ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին:

Առաջիկա տարում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին կհատկացվի 393.6 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 21.4 տոկոսը), պաշտպանությանը, հասարակական կարգի պահպանությանը, անվտանգությանն ու դատական գործունեությանը՝ 468.8 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 25.4 տոկոսը), առողջապահությանը՝ 114.8 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 6.23 տոկոսը), կրթությանը՝ 153.2 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 8.33 տոկոսը), սոցիալական պաշտպանությանը՝ 504.8 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 27.4 տոկոսը): 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքով հանրային ծառայություններին հատկացումների ծավալը հաստատվել է 361.8 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 19.5 տոկոսը), պաշտպանությանը, հասարակական կարգի պահպանությանը, անվտանգությանն ու դատական գործունեությանը՝ 460.5 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 24.8 տոկոսը), առողջապահությանը՝ 113.7 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 6.13 տոկոսը), կրթությանը՝ 161.1 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 8.68 տոկոսը), սոցիալական պաշտպանությանը՝

492.1 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 26.5 տոկոսը): 2021 թվականին ընթացիկ տարվա հաստատված ցուցանիշի համեմատությամբ հանրային ծառայությունների գծով ծախսերը կավելանան 31.7 մլրդ դրամով, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության, անվտանգությանն ու դատական գործունեության ֆինանսավորման նպատակով կատարվելիք ծախսերը՝ 8.3 մլրդ դրամով, առողջապահության ծախսերը՝ 1.1 մլրդ դրամով, սոցիալական պաշտպանության ծախսերը՝ 12.8 մլրդ դրամով: Կրթության ոլորտի ծախսերը կնվազեն 7.6 մլրդ դրամով, իսկ տնտեսական ոլորտի ծախսերը՝ 57.5 մլրդ դրամով:

8. Սոցիալական բնագավառի ծախսերը, ընդհանուր առմամբ, 2021 թվականին հիմնականում կպահպանեն նախորդ տարիներին ձևավորված միտումները (տե՛ս աղյուսակ 6-ը): Մասնավորապես, 2021 թվականի պետական բյուջեի նախագծով սոցիալական ոլորտի ծախսերը պլանավորված են 803.6 մլրդ դրամի չափով, ինչը 2020 թվականի հաստատված ցուցանիշին գերազանցում է 5.8 մլրդ դրամով: Չնայած անվանական արտահայտությամբ աճին, ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցության առումով դրանք կնվազեն 0.8 տոկոսային կետով՝ 12.8 տոկոսից հասնելով 12.0 տոկոսի: Իսկ բյուջեի ընդհանուր ծախսերի կառուցվածքում սոցիալական ոլորտի ծախսերն առաջիկա տարում կկազմեն 43.6 տոկոս ընթացիկ տարվա 43.0 տոկոսի փոխարեն:

Աղյուսակ 6.

Սոցիալական ոլորտի ծախսերը 2017-2021 թվականներին (մլրդ. դրամ)

Ցուցանիշներ	2017թ. փաստացի	2018թ. փաստացի	2019թ. փաստացի	2020թ. պլան	2021թ. նախագիծ
Սոցիալական ոլորտ, ընդամենը	642.5	643.1	716.8	797.8	803.6
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ(%)	11.5	10.7	10.9	12.8	12.0
Տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	42.7	44.4	44.0	43.0	43.6
Այդ թվում					
1. Կրթություն	124.4	121.6	129.3	161.1	153.5
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ(%)	2.23	2.02	1.97	2.58	2.28

Տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.27	8.40	7.94	8.68	8.33
2. Սոցիալական պաշտպանություն	408.9	416.6	453.9	492.0	504.8
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ(%)	7.34	6.92	6.91	7.88	7.51
Տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	27.2	28.8	27.9	26.5	27.4
3. Առողջապահություն	83.2	79.6	99.3	113.7	114.8
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ(%)	1.49	1.32	1.51	1.82	1.71
Տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	5.53	5.50	6.09	6.13	6.23
4. Հանգիստ, մշակույթ և կրոն	26.0	25.3	33.6	31.0	30.5
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ(%)	0.47	0.42	0.51	0.50	0.45
Տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.73	1.75	2.06	1.67	1.66

Ինչ վերաբերում է սոցիալական ոլորտի ընդհանուր նկարագրին, կարելի է ասել, որ առաջիկա տարում նախատեսվում է պահպանել բնակչության սոցիալական ապահովության և սոցիալական պաշտպանության առկա մակարդակը, ինչն էլ, հաշվի առնելով նոր կորոնավիրուսի տարածման և պատերազմական գործողությունների հետևանքները, բավականին դրական միտում կլինի:

9. Առաջիկա տարում սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը կաճեն 12.8 մլրդ դրամով և կկազմեն 504.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 7.51 տոկոսը: Դրական գնահատելով նշված հանգամանքը, միևնույն ժամանակ, կարծում ենք, որ առաջիկա տարում հանրապետությունում ստեղծված բարդ ռազմաքաղաքական, ինչպես նաև համաճարակի շարունակվող տարածմամբ պայմանավորված կառաջանա բավականաչափ բարդ

սոցիալական իրավիճակ, ինչը կենթադրի այդ ուղղությամբ ֆինանսավորման այլընտրանքային և լրացուցիչ միջոցների նախատեսում: Ի դեպ, պետք է նշել, որ 2018-2020 թվականներին սոցիալական ապահովության ծախսերն աճել են համապատասխանաբար՝ 7.7 մլրդ, 37.3 մլրդ և 38.1 մլրդ դրամով: Այսինքն, առաջիկա տարում սոցիալական ապահովության ծախսերի անվանական աճը ամենացածրն է վերջին երկու տարիներին, ինչը, մեր կարծիքով, ֆինանսական հնարավորությունների սահմաններում վերանայման կարիք ունի:

10. Առողջապահության ոլորտի ծախսերը 2021 թվականին կկազմեն 114.8 մլրդ դրամ 2020 թվականի 113.7 մլրդ դրամի դիմաց: ՀՆԱ-ի հետ հարաբերակցության առումով 2021 թվականին այն կկազմի 1.71 տոկոս ընթացիկ տարվա 1.82 տոկոսի դիմաց: Այլ կերպ ասած, առաջիկա տարում առողջապահության ոլորտի ծախսերը կաճեն 1.1 մլրդ դրամով: Կարծում ենք, ծախսերի անվանական ավելացման նման համեստ մակարդակը կարող է բավարար չլինել նոր տիպի կորոնավիրուսի համաճարակի հետևանքով հանրապետության առողջապահության համակարգի առջև ծառայած խնդիրների լուծման ու մարտահրավերների հաղթահարման համար:

11. Նախագծով 2021 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 4.1 տոկոսի չափով և կազմում է 274.1 մլրդ. դրամ:

Ինչ վերաբերում է ՀՀ արտաքին պարտքին, պետք է նշել, որ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 5.785 մլն. ԱՄՆ դոլար, 2020 թվականի տարեվերջի դրությամբ նախատեսվում է, որ այն կհասնի մոտ 6.734 մլն. ԱՄՆ դոլարի, իսկ 2021 թվականի համար ծրագրվող ցուցանիշը կազմում է 6.669 մլն. ԱՄՆ դոլար: Փաստորեն, արտաքին պարտքի աճը 2019-2021 թվականների համար կկազմի մոտ 885 մլն. դոլար, իսկ առաջիկա տարվա համար արտաքին պարտքն ընթացիկ տարվա համեմատ կնվազի 65 մլն դոլարով (տե՛ս աղյուսակ 7-ը):

2019-2021 թվականների տարեվերջի դրությամբ պետական պարտքի գերակշիռ մասը բաժին է ընկնում արտաքին պարտքին (համապատասխանաբար՝ 79.0%-ը, 76.1% և 72.4%-ը): Նման իրավիճակը, որն օրինաչափ երևույթ է դարձել ՀՀ-ի համար, ենթադրում է ֆինանսավորման ներքին աղբյուրների ընդլայնմանը և ֆինանսական ներքին ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված քայլերի իրականացում: Միաժամանակ, 2021 թվականին կանխատեսվող արտաքին պարտքի աճի զսպումը, մեր կարծիքով, դրականորեն կանդրադառնա դրա ծավալների կրճատման և հետագա տարիներին պետական բյուջեի վրա պարտքի սպասարկման գծով բեռի թեթևացման վրա:

ՀՀ պետական պարտքը 2019-2021 թթ. (մլն. ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	31.12.2019թ.	31.12.2020թ.	31.12.2021թ.
Պետական պարտք՝ ընդամենը	7.321	8.850	9.215
ՀՆԱ-ի նկատմամբ %	53.5	69.0	66.8
այդ թվում՝			
արտաքին պարտք	5.785	6.734	6.669
ՀՆԱ-ի նկատմամբ %	42.2	52.5	48.3
ներքին պարտք	1.537	2.116	2.456
ՀՆԱ-ի նկատմամբ %	11.2	16.5	18.4

Ուշագրավ է այն հանգամանքը, որ 2020 և 2021 թվականների տարեվերջի դրությամբ պետական պարտքը կգերազանցի ՀՆԱ-ի 60 տոկոսը, ինչը պարտքային տեսանկյունից բավականաչափ բարձր ցուցանիշ է: Հաշվի առնելով այդ հանգամանքը, կարծում ենք, նպատակահարմար կլիներ բյուջեի բացատրագրում ներկայացնել պետական պարտքի կառավարման հիմնական միջոցառումներն ու քայլերը՝ ուղղված այդ հարաբերակցության աստիճանական նվազեցմանը:

Անդրադառնալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին Նախագծի համապատասխանությանը՝ նշենք հետևյալը.

12. Նախագծի վերևի աջ անկյունում նշված «ՆԱԽԱԳԻԾ» բառն ընդգծելու անհրաժեշտությունը բացակայում է՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասը:

13. Առաջարկում ենք Նախագծի 1-ին, 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածների մասերի և կետերի համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերին՝ հոդվածների մասերն ու կետերը համարակալելով արաբական թվանշաններով և համապատասխանաբար մասերի համարները տեքստից բաժանելով միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Նշված փոփոխության կատարման արդյունքում անհրաժեշտություն է առաջանում նաև համապատասխանեցնել Նախագծի մի շարք հոդվածներում կետերին և ենթակետերին արված հղումները, օրինակ՝ Նախագծի 7-րդ հոդվածում նշված «կետերով» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասերով» բառով, քանի որ Նախագծի 9-րդ հոդվածը պետք է բաժանվի համարակալված մասերի: Նույնական փոփոխություններ կատարելու

անհրաժեշտություն է առաջանում նաև Նախագծի 7-րդ հոդվածի 21-րդ մասում, 8-րդ հոդվածի 6-րդ մասում, 9-րդ հոդվածի 6-րդ մասում և այլն:

14. Նախագծի 4-րդ հոդվածում և ամբողջ տեքստում կիրառված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» և Նախագծի 5-րդ և 7-րդ հոդվածներում կիրառված «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը համապատասխան հոլովածներով առաջարկում ենք փոխարինել «Կենտրոնական բանկ» և «Կառավարություն» բառերով՝ համապատասխան հոլովածներով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ կիրառված հասկացությունները:

15. Նախագծի 5-րդ հոդվածում և մյուս հոդվածներում վկայակոչված օրենքների վերնագրերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:

16. Նախագծի 7-րդ հոդվածի 15-րդ մասում «23-րդ հոդվածի 1-ին կետին» բառերն առաջարկում ենք փոխարինել «23-րդ հոդվածի 1-ին մասին» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերը: Նույն առաջարկը վերաբերելի է նաև Նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ մասերին, 12-րդ մասի «զ» և «դ» ենթակետերին, ինչպես նաև 15-րդ մասին:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՁԱԶՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատարողներ՝ Գ. Կիրակոսյան (հեռ.՝ 011 513-606),

Ա. Գալստյան (հեռ.՝ 011 513-235)

22.10.2020թ.

ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱԶՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՆԻ ՍՈՒԹԱՖՅԱՆ

Կատարող՝ Զ. Հովասափյան (հեռ.՝ 011-513-248)

23.10.2020թ.

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՆԻ ՍՈՒԹԱՖՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման
անհրաժեշտության բացակայության մասին**

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման
անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Կատարող՝ Ջ. Հովասափյան (հեռ.՝ 011-513-248)

23.10.2020թ.